նրանց վրայ. այդ պատճառով նա սովորութիւն ունէր մանել քաղաքը՝ դիւղը՝ ծպտեալ, գնալ շուկան, տեսնել չափը, կշիռը, քննել մի եւ հայի որակութիւնն, եւ սաստիկ պատժել տալ խարդախներին: Մի անգամ Արդաբիլ գալով, նա ձգել տուեց հնոցի մէջ՝ մի հարուստ հայավաճառի, որ մերժել էր աղքատներին հաց ծախել, ասելով թէ պէտք է հացը Շահաբբասի եւ նրա զօրքի համար պահէր: Նա ատում էր կաշառակեր դատաւորներին եւ սաստիկ պատժում էր նրանց:"

Շահաբբասի մասին մեծ գովասանքով խօսում է եւ Շարդէն ասպետը, որ երկու անգամ ճանապարհորդեց Պարսկաստան 1666ին եւ 1671—74ին, ուրեմն Հայերի գաղթականութիւնից 62 տարի յետոյ: Նա ասում է, որ Շահաբբասը մի արդարադատ թագաւոր էր, որ ջանք էր անում միայն երջանիկ շինել իր ժողովուրդը, սաստիկ պատժում էր կաշառակեր կառավարիչներին, հարստահարիչներին, բայց նա եւս հաստատում է, որ սպաննել տուեց իր անդրանիկ որդուն, գահաժառանգին՝ նախանձից դրդուած, թէեւ յետոյ սաստիկ փոշմանեց եւ իր յանցանքը քաւելու համար իրան գահաժառանգ կարգեց սպաննուածի որդուն, իր թոռան, եւ որպէս զի իր միւս երկու որդիները չյափշտակեն գահն իրանց եղբօրորդու ձեռքից, նա կուրացընել տուեց իր այդ երկու որդիներին, որովհետեւ պարսկական օրէնքով կոյրը չէ կարող թագաւոր լինել:

Տեսնենք այժմ ինչ պատճառներ առաջ բերին Հայերի գաղթականութիւնն, եւ այդ